

Համաձայնեցված է

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Վ. Գաբրիելյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան**

07 հունիսի 2011 թ. N 29

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 29

**ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԵՐԻ
ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ (ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՆԿԱՏՄԱՍԲ ԱՎԵԼԱՑՎԱԾ
ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն, բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրումն ազատված է ավելացված արժեքի հարկից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարկի տրամադրումն ինքնին ավելացված արժեքի հարկով հարկվող գործարք չէ՝ Օրենքի վերոնշյալ դրույթի կիրառությունը նշանակում է, որ ավելացված արժեքի հարկից ազատվում են բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման ծառայությունների մատուցման գործարքները (գործառնությունները): Ստեղծված իրավիճակում Օրենքի վերոնշյալ դրույթը տարաբնույթ կերպ է ընկալվում՝ կապված բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման գործարքները (գործառնությունները) ավելացված արժեքի հարկով հարկելու հարցի հետ:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով՝ **պաշտոնապես պարզաբանում եմ.**

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման գործարքների (գործառնությունների) համար «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն ԱԱՀ-ից ազատված շրջանառություն է համարվում.

- 1) վարկերի տրամադրման դիմաց վճարվող տոկոսային եկամուտը, վարկի տրամադրման պահին միանվագ գանձվող՝ վարկի տրամադրման վճարը, վարկի սպասարկման (այդ թվում՝ մոնիտորինգի) համար որոշակի պարբերականությամբ գանձվող վճարները,
- 2) վարկային հայտի ուսումնասիրության համար գանձվող վճարը,
- 3) վարկային հաշվի բացման, վարման և սպասարկման համար գանձվող վճարը: